



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

8 սեպտեմբերի 2020 թվական

5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 19.00

Հրայրա Սարգսյան

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել են
ավագանու 13 անդամ՝

Գայանե Մելքոմ Մելքոմյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Մարկոս Հարությունյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Դավիթ Խաժակյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Սաթենիկ Մկրտչյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Հոփսիմե Առաքելյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Անի Խաչատրյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արմեն Ներսիսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Սուրեն Էյրամջյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արթուր Իսախիրյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Էռնեստ Ավանեսով՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Գրիգորի Երիցյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Աննա Զավախյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն:

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Մելքում Մելքումյան, խնդրեմ:

Գայանե Մելքում Մելքումյան

-Իմ հարցը վերաբերում է Միսաք Մանուշյանի անվան պուրակին: Ցանկանում եմ իմանալ ի՞նչ փուլում է գտնվում այնտեղ սրճարանի կառուցման գործընթացը և ի՞նչ է սպասվում:

Գիտենք, որ աշխատանքները կասեցված են անժամկետ, քանի որ որոշակի խախտումներ էին բացահայտվել: Այս մասով մենք ներկայացրել էինք գրություն, կցանկանայի իմանալ արդյունքները:

Հրաչյա Սարգսյան

-Մենք համապատասխան գրություններ ենք ուղարկել ՀՀ քաղաքաշինության կոմիտե և ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ պարզաբանումներ ստանալու համար: Այս պահի դրությամբ պատասխաններ դեռ չունենք: Ակնկալում ենք, որ հաջորդ շաբաթ կունենանք պատասխաններ և կհասկանանք, թե ինչ ընթացք կլինի:

Գայանե Մելքում Մելքումյան

-Շնորհակալ եմ պարոն Սարգսյան: Ես ցանկանում եմ մի մտահոգություն արձանագրել և մի փոքր նկատառում հնչեցնել, որը ես արդեն իսկ հրապարակել եմ:

Առաջինը՝ քաղաքացիներից ահագանգ եմ ստացել, որ իրականում այնտեղ տեսել են, որ կտուրի մասում շինարարություն է իրականացվում: Այս մասով կխնդրեմ համապատասխան վարչությանն ավելի աչալուրջ լինել:

Մի փոքր դիտարկում իմ կողմից, խնդրել էի ինձ տրամադրել պուրակում 2006թ. կառուցված շինության վերաբերյալ քաղաքապետարանում առկա փաստաթղթերի ամբողջական փաթեթը, նաև որոշակի փաստաթղթեր Կադաստրի կոմիտեից, որոնք ուսումնասիրելու արդյունքում շատ լուրջ մտահոգություններ ունեցա:

Միսաք Մանուշյանի անվան պուրակի կառուցապատման արխիվային փաստաթղթերն ուսումնասիրելու արդյունքում, ինձ մոտ հիմնավոր կասկած է ձևավորվել, որ 2006թ. սրճարանի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել է ապօրինաբար: Մասնավորապես՝ 2006թ. մարտին արդեն ուժի մեջ էր մտել Հողային օրենսգրքում 2005 թվականի հոկտեմբերին լրացված 48՝ հոդվածը: Համաձայն որի՝ համայնքին պատկանող հողի վրա նոր շինություն կարող էր կառուցվել միայն կառուցապատման իրավունքի հիման վրա, իսկ կառուցապատման իրավունքով կառուցված շինությունները չէին կարող գրանցվել որպես մասնավոր սեփականություն, այլ պետք է համարվեր համայնքի սեփականությունը, ինչպես որ հիմա տեղի է ունենալու այս նոր կառուցվող սրճարանի դեպքում: Այսինքն՝

համայնքային հողի վրա վարձակալության իրավունքով չէր կարող կառուցվել շինություն և գրանցվել որպես մասնավոր սեփականություն: Մինչդեռ վարձակալին տրվել է շինությունվություն և Կադաստրի կոմիտեն գրանցել է սեփականության իրավունք:

Եվս մեկ կասկածելի հանգամանք. վերոնշյալն առաջին հերթին վերաբերում էր Հոդային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերին, որոնց մեջ մտնում են զբոսայգիները, պուրակները և այլ ընդհանուր օգտագործման հողերը: Սակայն սեփականության վկայականի վերջին էջում երևում է Կադաստրի կոմիտեի աշխատակցի լրացուցիչ նշումն առ այն, որ համաձայն Երևանի՝ այն ժամանակաշրջանի քաղաքապետի կողմից տրված գրության, հողամասը ընդգրկված չէ 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Մինչդեռ, բոլորս շատ լավ գիտենք, որ տարածքը 2006թ. և դրանից շատ ավելի առաջ, պուրակ էր: Հարց է առաջանում, թե պուրակն ինչպե՞ս և ինչու՞ ներառված չի եղել 60-րդ հոդվածի հողերի մեջ և արդյոք եղել է ինչ-որ դիտավորություն այս հարցում:

Թեև քաղաքապետարանի բանակցությունների արդյունքում այդ սեփականության օբյեկտը վերացվել է՝ փաստացի սրճարանը քանդվել է, բայց այս կասկածելի հանգամանքներն իսկապես մտահոգիչ են: Այդ առումով կոչ եմ անում և առաջարկում եմ իրավապահ մարմիններին ուսումնասիրել այս հարցը և պարզել, արդյոք, հանրային զբոսայգում՝ մասնավոր սեփականություն գրանցելու գործընթացում, եղել է որևէ ապօրինություն: Այսքան տարի այդ օբյեկտը գոյություն է ունեցել: Այսօր ստիպված բանակցությունների միջոցով փորձում ենք վերադարձնել հանրային տարածքը:

Հրաչյա Սարգսյան

-Քանի որ բավականին մեծ վերլուծություն եք իրականացրել, առաջարկում եմ գրավոր ներկայացնել, որպեսզի Ձեր իրականացրած ամբողջական վերլուծությունը ներառենք այլ գերատեսչություններից ստացված փաստաթղթերում և ընդհանուր եզրակացություն կազմենք:

Գայանե Մելքում Մելքումյան

-Այս պահին խնդրել եմ լրացուցիչ ևս մեկ փաստաթուղթ ինձ տրամադրել: Մի փոքր հարց կա, կճշտեմ ու, ավելի համոզված լինելով իմ կասկածների մեջ, գրավոր կներկայացնեմ:

Հրաչյա Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մարկոս Հարությունյան, խնդրեմ:

Մարկոս Հարությունյան

-Ցանկանում եմ անդրադառնալ վերջերս ՀՀ կառավարության նիստին վարչապետի կողմից հնչեցված գնահատականներին՝ նախ գույքահարկի բարձրացման մասով:

Մեր երկրի վարչապետը նշում է, որ մարդիկ ամեն ինչ անում են, որպեսզի չեղարկեն գույքահարկի վերաբերյալ նոր ընդունված օրենքը, թեպետ ամեն ինչ անելու կարիք էլ չկա: Նախորդ նիստին, երբ ես այստեղ հարց բարձրացրեցի, քաղաքապետը և քաղաքապետի՝ ֆինանսական ոլորտը համակարգող տեղակալն իմ հետ համակարծիք էին, որ այս ճգնաժամի ժամանակ անթույլատրելի է գույքահարկի բարձրացումը և մեծ խոչընդոտներ է լինելու հավաքագրման գործընթացում:

ՀՀ վարչապետը նիստի ժամանակ նշեց, որ եղել են մարդիկ, ովքեր գույքահարկ չեն վճարել: Առաջին հերթին ցանկանում եմ ճշտել, եթե Երևան քաղաքում կան այդպիսի արտոնյալներ, ապա հեղափոխությունից հետո ի՞նչն է խանգարել, որպեսզի ճիշտ վարչարարություն իրականացվի և այդ գումարները գանձվեն:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Արմեն Հարությունյանը:

Արմեն Հարությունյան

-Ձեր հնչեցրած հարցի հետ կապված դիտել եմ նաև Ձեր ուղիղ հեռարձակումը:

Այո՛, իհարկե կան չվճարողներ: Բնականաբար, կան մարդիկ, ովքեր և՛ գույքահարկը, և՛ մյուս հարկատեսակները չեն վճարում: Ես համակարծիք չեմ Ձեզ հետ, նրանք արտոնյալներ չեն: Այդ մարդիկ ունեն ժամկետանց պարտավորություններ և համայնքը, օրենսդրությամբ սահմանված լիազորությունների սահմաններում, իրականացնում է վարչարարություն: Այսինքն՝ իրականացնում է վարչական վարույթներ, բռնագանձման գործընթացներ, եթե պարտքերը մեկ միլիոն դրամից ավելի են լինում նաև սնանկացման գործընթաց է իրականացվում: Այդ մարդիկ խուսափել են իրենց հարկային պարտավորությունները կատարելուց, սակայն չեն ազատվում գույքահարկից: Նրանք պետք է վճարեն այդ գույքահարկը՝ ավելի տույժ ու տուգանքներով, համապատասխան գործառույթն իրականացնելուց հետո:

Մարկոս Հարությունյան

-Այս ամենից կարելի է ենթադրել, որ վարչարարություն արվել է, ուղղակի մարդիկ, գումար չունենալու պատճառով, չեն վճարել և հետագայում միջոցներ են ձեռնարկվելու այդ գումարները վճարելու համար:

Երկրորդ հարցս հնչեցնեմ. ՀՀ կառավարության նիստին վարչապետը գնահատական է տալիս նաև, որ Երևան քաղաքի կենտրոնում գույքահարկի գումարները շատ ցածր են: Ես ցանկանում եմ պարզաբանում ստանալ մեր սեփական եկամուտների մասով, թե Երևան քաղաքի բյուջեի ո՞ր տոկոսն է կազմում կենտրոնի տարածքի բյուջեն:

Գույքահարկը բարձրացնելով մենք ոչնչով քաղաքացու կյանքը չենք բարելավում:

Վերջերս իմ ունեցած ուղիղ հեռարձակման ընթացքում նշել էի, որ գույքահարկի բարձրացումը տրամաբանորեն կարող էր դիտվել այն առումով, եթե պետությունը պարտավորվածություն վերցնելու իր վրա՝ այդ օրենքով և երևանցին հասկանալի, որ երբ իր բնակարանը համարվի 4-րդ կարգի վթարային՝ պետությունը նրան բնակարանով կապահովի օրենքի ուժով, ոչ թե բարի կամքի դրսևորումով:

Պարոն Հարությունյան, ցանկանում եմ իմանալ արդյոք այդ գումարները շատ ցածր են, թե ոչ և ինչպիսի՞ խոչընդոտներ եք ապագայում տեսնում, որին հանդիպելու եք այս բարձր գույքահարկը գանձելիս:

Արմեն Հարությունյան

-Նախ սկսեմ նրանից, որ մինչ այս օրենքի նախաձեռնությունը, Հայաստանի Հանրապետությունում գույքահարկի հաշվարկը կատարվում էր ըստ կադաստրային արժեքների: Այսինքն հաշվարկված կադաստրային արժեքի՝ համապատասխան սանդղակով գանձվում էր գույքահարկ: 2000 թվականի սկզբին, երբ «Գույքահարկի մասին» օրենքը մտել է ուժի մեջ, այդ ժամանակվանից ի վեր կադաստրային արժեքի վերանայում չի կատարվել, և եթե համեմատենք շուկայական արժեքի հետ, իհարկե մեծ տարբերություններ կան:

Ինչ վերաբերում է կենտրոնից հավաքագրված գումարներին, բնական է՝ դա լինի Երևան քաղաքը, թե այլ քաղաք, եթե կենտրոն է, ենթադրվում է, որ պետք է ավելի շատ գումար հավաքագրվի, քան մյուս վարչական շրջաններից միասին վերցրած:

Լսելով Ձեր հորդորն այս ավագանու նիստին պատրաստված գալու մասին, պարոն Հարությունյան, ես առանձնացրել եմ թվեր՝ հաշվարկված գույքահարկի և պլանային առաջադրանքի՝ կոնկրետ անշարժ գույքի մասով: Կենտրոն վարչական շրջանից փաստացի գանձված գույքահարկը կազմում է մոտավորապես 47%, բայց դա տրամաբանական է, որովհետև բնական է, որ կադաստրային արժեքը Կենտրոն վարչական շրջանում ավելի բարձր է, քան մյուս վարչական շրջաններում և հաշվարկված հարկը պետք է ավել լինի:

Հրաչյա Սարգսյան

-Պարոն Հարությունյան թույլ տվեք չհամաձայնել, որովհետև Երևան համայնքում մենք այս պահի դրությամբ վերելակների փոխարինում ենք իրականացնում և ընդհանուր բյուջեն 4.500.000.000 դրամի շրջանակներում է, իսկ այդ գումարները գոյանում են նաև գույքահարկի վճարվող գումարներից: Այլ խնդիր է, թե 4-րդ կարգի վթարային շենքերին դա վերաբերում է, թե ոչ: Երևան համայնքը, այնուամենայնիվ չունենալով 4-րդ կարգի վթարային շենքերի նկատմամբ իրավական առումով որևէ պարտավորվածություն, ամեն ջանք չի խնայում, որպեսզի կարողանա այդ բնակիչներին աջակցություն ցուցաբերի: Աջակցությունը լինում է

բնակարանի հատկացմամբ կամ վարձակալությամբ բնակարան տրամադրելով, իսկ այդ միջոցները գոյանում են նաև գույքահարկից:

Մարկոս Հարությունյան

-Թույլ տվեք արձագանքել. ինչ վերաբերում է վթարային շենքերին՝ կարծում եմ թե՛ նիստին ներկա գտնվող բոլոր վարչությունների պետերը, թե՛ վարչական շրջանների ղեկավարները, թե՛ ավագանիները և թե՛ երևանցիները շատ լավ տեսնում են, թե ինչպես էք այդ գործառույթն իրականացնում: Հունվար ամսից մինչև հիմա պետական գույքի կառավարման կոմիտեից ընդամենը մի հողհատկացում պետք է լինի, որպեսզի կարողանանք Արգումանյան փողոցի հ.10 և հ.17 շենքերի կառուցման ծրագիրը սկսենք: Գնահատականները թողնում եմ երևանցիներին, իսկ ինչ վերաբերում է վերելակների փոխարինմանը, ապա դա նախատեսված է այս տարվա բյուջեով, ոչ թե 2026թ., երբ ամբողջովին գույքահարկի բարձրացումը կլինի: Այս տարվա ծրագրի հետ ամենևին այս ամենը կապ չունի:

Ես շատ լավ հասկանում եմ, որ ձեր սեփական եկամուտներն այնքան շատ են բարձրանալու, որ ձեր քաղաքական ծրագրերը կարողանաք իրականացնել: Միևնույն ժամանակ պետք է արդար գտնվեք և երևանցիներին ներկայացնեք այն քաղաքական ծրագիրը, որը ներկայացրել էք Երևանի ավագանու ընտրությունների քարոզարշավի ժամանակ և մի տող էլ ավելացնեիք, որ հարկային պարտավորվածությունը երևանցին իր սեփական մաշկի վրա է զգալու:

Հրայր Սարգսյան

-Պետք է հասկանանք մի բան, որ եթե մենք ձեռք ենք բերում ինչ-որ մի ծառայություն կամ մեր միջավայրում ինչ-որ փոփոխություն է տեղի ունենում, դրա համար պետք է վճարել: Այդ վճարումը լինում է կամ պետությունից ստացված սուբսիդիաների, դոտացիաների, դրամաշնորհների հաշվին, որոնք հավաքագրվում են բնակիչներից, գործարարներից, բիզնեսի արդյունքում: Այսինքն, յուրաքանչյուր փոփոխության համար որևէ մեկը վճարում է և արդյունքում պետք է հասկանալ, թե ով է վճարումն իրականացնում:

Հրայր Սարգսյան

Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյան, խնդրեմ:

Դավիթ Խաժակյան

-Առաջին հարցս վերաբերում է մետրոպոլիտենի նոր կայարանին և ճոպանուղուն: Պարոն Մեսչյանը երբ ազատվեց զբաղեցրած պաշտոնից, տպավորություն ստեղծվեց, որ նա իր հետ իր բարձրաձայնած խոստումները տանում է: Մինչդեռ մենք հիշում ենք, որ դրանք ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության նախընտրական խոստումներն էին: Հիշեցնեմ նաև, որ 2018թ.

ավարտին քաղաքապետարանը պաշտոնական հայտարարությամբ հանդես եկավ, որ մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցումը մտել է գործնական փուլ:

Պարոն Սարգսյան, ի՞նչ փուլում է մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցման հարցը, շարունակում եք արդյոք պնդել, որ այդ նախընտրական խոստումը կկատարվի և ի՞նչ փուլում է ճուպանուղու կառուցման նախագիծը:

Հրաչյա Սարգսյան

-Մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցման վերաբերյալ քննարկում է տեղի ունեցել ՀՀ կառավարությունում և ընդհանուր համաձայնություն է ձեռք բերվել, որ մրցույթն իրականացվի երկու փուլով: Դրա շրջանակներում պետք է հայտարարվի մրցույթ՝ մեր տեսլականի իրականացման համար, թե ինչպիսի տեխնիկական բնութագիր պետք է ունենան: Քանի որ տեխնիկական բնութագիրը կազմելու համար մասնագիտական հմտություններ է անհրաժեշտ, այդ պատճառով, այս պահի դրությամբ, աշխատում ենք այդ մրցութային փաթեթի վրա: Դրանից հետո՝ երկրորդ փուլով, մրցույթ պետք է հայտարարվի: Դա այն քայլերն են, որ այս պահի դրությամբ մետրոպոլիտենի նոր կայարանի հետ կապված իրականացվում է:

Դավիթ Խաժակյան

-Կարո՞ղ եք որոշակի ժամկետ նշել:

Հրաչյա Սարգսյան

-Ժամկետ չեմ կարող նշել: Աշխատանքներն սկսված են: Մենք այդ աշխատանքներն իրականացնում ենք և անկախ նրանից, թե ով կլինի քաղաքային իշխանությունում և մեր պաշտոնավարման ընթացքում մենք դա ավարտին կհասցնենք, թե կիսատ կմնա, այնուամենայնիվ, դա այն քայլերն են, որոնք իրականացվում են: Այս ամենը ցանկացած ղեկավարի հնարավորություն կտա գործընթացն սկսել ոչ թե 0-ից, այլ մի մակարդակ ավելի բարձրից:

Դավիթ Խաժակյան

-Շնորհակալություն: Ես այս մասով չեի ցանկանա ինչ-որ վատատեսական կարծիք հնչեցնել: Անկեղծ ասած, եթե ես լինելի ավագանու մեծամասնության փոխարեն, այս պահից սկսած կասեի, որ քարոզարշավի ժամանակ խոստացածն այս պահին չի ստացվում կատարել: Ամեն անգամ, երբ հարց ու պատասխան է տեղի ունենում, միշտ արձանագրում ենք մի այնպիսի իրավիճակ, երբ դեռ առջևում միայն անորոշություն է: Կարող ենք այսպիսի տասնյակ նախագծեր կազմել, տասնյակ մրցութային փաթեթներ ձևավորել: Այս հարցն անիրատեսական է և դա իմ տեսակետն է:

Հաջորդ հարցս վերաբերում է «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկին:

Վերջերս եղավ հրապարակում և ես նաև դրա վերաբերյալ դիրքորոշում հայտնեցի. պարզվում է՝ համայնքը մեկ տարուց ավել խուսափել է վճարել մոտ մի քանի հարյուր միլիոն դրամ ավելացված արժեքի հարկը, որը գոյացել է ԵԱՍՄ-ում: Պետական եկամուտների կոմիտեն հստակ իր դիրքորոշումը հայտնել է, որ ԵԱՍՄ-ն կառավարչական հիմնարկ չէ, ինչը բնական է, որովհետև իրականացնում է աղբահանության գործառույթ: Ինչպիսի ձևակերպում էլ տանք, անվանենք հիմնարկ կամ փոխենք կառավարչական հիմնարկ, ինչպես քննարկվում է քաղաքապետարանում, միևնույն է դրանից էությունը չի փոխվում: Այն ծառայություն մատուցող հիմնարկ է, որը Հարկային օրենսգրքի այդ տրամաբանության մեջ չի տեղավորվում: Ես կցանկանայի Ձեր մեկնաբանությունն իմանալ, թե ի վերջո համայնքն ինչու՞ է խուսափում վճարել ավելացված արժեքի հարկը և ե՞րբ է վճարելու:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն Խաժակյան համայնքն ընդհանրապես չի խուսափում հարկեր վճարելուց: Պարզապես տարակարծությունների և ընկալումների տարբերություն կար քաղաքապետարանի և հարկային մարմինների միջև ու պարզաբանման անհրաժեշտություն կար: Պարզաբանումների ավարտից հետո համապատասխան քայլեր կիրականացվեն:

Այնուամենայնիվ, համայնքը չի խուսափում որևէ հարկային պարտավորություններ իրականացնելուց:

Դավիթ Խաժակյան

-Շնորհակալություն: Որքան ես տեղյակ եմ, նախորդ ամսին ՊԵԿ-ն արդեն իսկ այդ վերջնական կարծիքը հայտնել է: Զարմանալիս այն է, որ փաստորեն մեկ տարի ՊԵԿ-ի հետ քննարկում էք համայնքի կողմից հարկային պարտավորությունների կատարման հարցը և դա մնում է ներքին քննարկումների ֆորմատում: Մակայն այլ մասնավոր կազմակերպությունների կամ այլ համայնքապետերի դեպքում, եթե երկու ամիս ուշանար ԱԱՀ վճարումը՝ նմանատիպ պատճառաբանությամբ, ՊԵԿ-ը հստակ պնդում է, որ ենթակա է վճարման:

ԵԱՍՄ-ին արտոնություն չի սահմանվում այն պատճառով, որ այն չի հանդիսանում կառավարչական հիմնարկ: Ես կարծում եմ այդտեղ անգամ բանավեճ չէր կարող լինել: Կառավարչական գործառույթ իրականացնում է քաղաքապետարանի աշխատակազմը և բնական է, որ ԱԱՀ վճարող սուբյեկտ չպետք է լինի: Ես պարզապես այս մասով տարակուսանք եմ հայտնում՝ պետական և իրավապահ համակարգի կողմից ինչու է

այսպիսի հայեցողություն: Մեկն ԱԱՀ չի վճարում՝ անմիջապես քրեական գործ է հարուցվում, մի համայնքի ղեկավար ինչ-որ ապօրինի շինարարություն չի հայտնաբերում՝ քրեական գործ է հարուցվում, քանի որ նրա թողտվությամբ այդպիսի գործողություն է տեղի ունեցել: Երևանի քաղաքապետարանի ղեկավարն էր այդպես չէ: Ես, իհարկե, չեմ ուզում, որ քրեական գործ հարուցվի, բայց ուզում եմ, որ քաղաքապետարանի գործառույթները մնան օրինականության շրջանակներում: Ավելի շատ ուզում եմ, որ իրավապահ համակարգը ընտրովի չվերաբերվի, թե Սարգսյանն ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ է, ցանկանա մեկ տարի շարունակ կարող է ԱԱՀ չվճարել: Մյուսը՝ իշխանական որևէ ներկայացուցիչ չէ, նրա հանդեպ անմիջապես քրեական գործ է հարուցվում:

Հրաչյա Սարգսյան

-Ես այլ կարծիքի եմ՝ ընտրովի մոտեցում չկա: Ցանկացած գործարարների, եթե հարցնեք, նրանք շատ հաճախ հարկային մարմինների հետ համաձայնություն չեն ունենում՝ տարբեր մեկնաբանությունների հետ կապված: Լինում են դեպքեր, որ բավական երկար է տևում այդ բանավեճը, նույնիսկ հարցը վիճարկվում է դատարան:

Կրկին ցանկանում եմ հայտարարել, որ Երևան համայնքը չի խուսափել հարկային իր պարտավորություններն իրականացնելուց: Մենք համապատասխան դրամական միջոցներն ունենք, պարզաբանման խնդիր կար և դա էր իրականացվում: Միգուցե այդ պարզաբանման պրոցեսը բավական երկար է տևել, կարող էր ավելի կարճ լինել:

Հրաչյա Սարգսյան

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սաթենիկ Մկրտչյան, խնդրեմ:

Սաթենիկ Մկրտչյան

-Առաջին հարցս վերաբերում է Աջափնյակ վարչական շրջանի Սարգսյան փողոցի հ.10 հասցեում իրականացվող ապօրինի շինարարությանը: Ի՞նչ փուլում են գտնվում շինարարության նկատմամբ քաղաքապետարանի կողմից ձեռնարկված քայլերը:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար Թելման Թադևոսյանը:

Թելման Թադևոսյան

-Բնակչության շրջանում կա մի զգալի հատված, ովքեր մինչ օրս իրականացնում են ապօրինի շինարարություններ: Սարգսյան փողոցի հ.10 հասցեի հետ կապված չեմ կարող ասել, թե ինչու լայն արձագանք ստացավ և հանրային քննարկման առիթ դարձավ: Միևնույն ժամանակ վստահեցնում եմ բոլորին, որ թե՛ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից, թե՛ քաղաքապետարանի համապատասխան վարչությունների կողմից, օրենքով

սահմանված իրենց լիազորությունների շրջանակներում բոլոր գործողությունները կատարվել են:

Մարգարյան փողոցի հ.10 հասցեի ապօրինի շինությունը կառուցվել է շաբաթ-կիրակի օրերին՝ գիշերային ժամերին, որից հետո առաջին աշխատանքային օրը վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից կազմվել է արձանագրություն: Դրանից 2 օր հետո արդեն իսկ կար կայացված դատական ակտ, որն արգելում էր քաղաքապետարանին քանդման աշխատանքներ իրականացնել:

Ընթացքի վերաբերյալ կտեղեկացնենք լրացուցիչ, իսկ առավել մանրամասն տեղեկատվություն կատարված աշխատանքների վերաբերյալ կտրամադրենք փաթեթով:

Սաթենիկ Մկրտչյան

-Շնորհակալություն, այսինքն այս պահին չգիտե՞մք, թե ինչ փուլում է:

Թելման Թադևոսյան

-Այս պահի դրությամբ, առկա է դատական ակտ, որպեսզի քաղաքապետարանը քանդման աշխատանքներ չիրականացնի:

Սաթենիկ Մկրտչյան

-Թե ինչու՞ այս հարցը լայն արձագանք ստացավ, ասեմ, որ միայն այս հարցը չէ: Մարգարյան փողոցի վրա այս պահին կատարվում է ևս մի ապօրինի շինարարություն, բայց ինչու՞ սա արձագանք ստացավ, որովհետև Երևանի ավագանու նախորդ նիստերից մեկում, այս հարցը ևս մեկ անգամ բարձրացվել է մեր գործընկերների կողմից: Քաղաքապետի կողմից եղել է պարզաբանում և բանավոր հանձնարարական՝ տարածքն ապամոնտաժել և նախկին տեսքին բերել: Մենք՝ տարբեր ժամանակներում և տարբեր առիթներով այս հարցն անընդհատ քննարկել ենք համապատասխան վարչությունների հետ և ամեն անգամ պատասխանը եղել է՝ շուտով: Արդյունքում արդեն տեսնում ենք շինարարությունը:

Այնպիսի խնդրահարույց կետերի վերաբերյալ, որոնց նկատմամբ հսկողություն սահմանել չէք կարող, կարելի է այլ միջոցներ ձեռնարկել: Օրինակ՝ տեղադրել տեսանկարահանող սարքեր, հարևանների հետ խորհրդակցել ու յուրաքանչյուր շարժի դեպքում ինչ-որ ձևով տեղեկանալ: Ի վերջո, ավագանու անդամները բազմիցս այս հարցով դիմել են Ձեզ: Կարելի էր խնդրել, այդտեղ շաբաթ-կիրակի օրերին կնշանակեինք հերթապահություն: Ճիշտ է, մենք օրենսդրության շրջանակում ենք տեսնում հիմնական լուծումը, սակայն մինչև այդ որոշումն ունենալը, մենք պետք է գտնենք այլընտրանքային լուծումներ: Հույս ունենամ, պարոն Մարգարյան, որ ես հաջորդ օրերին կիմանամ գործընթացն ինչ փուլում է:

Հրաչյա Սարգսյան

-Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետ Ռոբերտ Դարբինյանը զբաղվում էր այդ հարցով: Այժմ նա գտնվում է արձակուրդում: Գործընթացի վերաբերյալ Ձեզ հավելյալ կտեղեկացնեմ:

Թելման Թադևոսյան

-Առաջին հերթին թեժ կետեր ասվածը շատ հարաբերական է ու ի՞նչ ենք հասկանում ընդհանրապես թեժ կետերի հետ կապված:

Տեղեկացնում եմ, որ ոչ աշխատանքային օրերին ևս սահմանվում է հսկողություն, բայց ոչ գիշերային ժամերին: Ես շաբաթ օրը՝ ցերեկային ժամերին, եղել եմ այդ հասցեում: Չենք կարող մեր աշխատակիցներին պարտադրել նաև գիշերային ժամերին հսկողություն սահմանել: Ինչ վերաբերում է տեսախցիկ տեղադրելուն, ապա ինչ-որ մեկն էլ ողջ գիշեր պետք է դրանք վերահսկի: Այս հարցը թերի է և հուսով ենք, որ մինչև տարեվերջ կունենանք օրենսդրական փոփոխություն, որը լիարժեք կկարգավորի այդ ոլորտը:

Սաթենիկ Մկրտչյան

-Հաջորդ հարցս հնչեցնեմ. շինարարության նախագծերի վերաբերյալ մենք հարցում ենք արել: Խնդրել ենք տրամադրել այն ընկերությունների ցանկը, որոնց կողմից իրականացվել են նախագծանախահաշվային աշխատանքները և շատ հետաքրքիր ու տարօրինակ օրինաչափություն ենք գտել:

Աջափնյակ, Էրեբունի, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում ոմն «Հափշին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից, ընդհանուր թվի հետ համեմատած, բավական շատ նախագծեր կան կազմված: Ես պետական ռեզիստրի գործակալությունից ճշտել եմ, թե ով է ընկերության նախագահը: Քանի որ ավագանու անդամը նաև քննիչ ու ոստիկան չէ, ես խնդրում եմ այս օրինաչափությունը հասկանալ: Ինչպե՞ս է լինում որ մի նախագծող ընկերություն ունի այսպիսի մեծ մասնակցություն նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման գործում: Արդյոք կան այստեղ ուղղորդումներ և արդյոք այդ ուղղորդումները կապված են որևէ մեկի հետ՝ ով քաղաքապետարանում է աշխատում: Այստեղ շատ հստակ ռիսկային վիճակագրություն կա:

Խնդրում եմ այս հարցին ուշադրություն դարձնել և ուսումնասիրել, հատկապես այս ժամանակաշրջանում, որովհետև ինչ-որ ուղղորդումն անընդունելի է:

Հրաչյա Սարգսյան

-Ուղղորդում ասվածը չեմ հասկանում: Քանի որ շինարարություն իրականացնելու համար պետք է կազմել նախագիծ: Հայտարարվում է մրցույթ և շահում է այն կազմակերպությունը, որն իրականացնում է նախագծման աշխատանքներ:

Սաթենիկ Մկրտչյան

-Պարոն Սարգսյան, ես ի նկատի ունեմ, ոչ թե քաղաքապետարանի նախագծանախահաշվային աշխատանքները, այլ վարչական շրջանների:

Հրայր Սարգսյան

-Տարբերություն չկա, բոլոր աշխատանքներն իրականացվում են նույն ընթացակարգով:

Սաթենիկ Մկրտչյան

-Այսինքն, քաղաքացին հետաքրքրվում է իր տան շինարարության նախագծի համար և արդյունքում պարզվում է, որ նախագծերի կազմման ցանկում բավականին մեծ տոկոսը կազմում է կոնկրետ կազմակերպություն:

Ես չեմ հասցրել ավելի մանրամասն ուսումնասիրել, բայց կարծում եմ, որ ևս մեկ անգամ ուսումնասիրելու անհրաժեշտություն կա, թե արդյոք կան ուղղորդումներ, թե ոչ:

Հրայր Սարգսյան

-Շնորհակալություն: Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժ/պ Անդրանիկ Սեդոյանը:

Անդրանիկ Սեդոյան

-Փորձեմ մասնագիտական տեսանկյունից պատասխանել հարցին:

Տիկին Մկրտչյան, ես կարծում եմ Ձեր հարցն ավելի շատ վերաբերում է հաստատված նախագծերին, թե ինչու է «Հափշին նախագիծ» ՍՊ ընկերության կողմից դրանք գերակշռում: Ես, լինելով նախագծային փաստաթղթերի հաստատման կիզակետում, ուղղակի ցանկանում եմ դիտարկել. ըստ երևույթին, պատճառն այն է, որ այդ կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում ամենամատչելի և նույնիսկ անթույլատրելի գներով նախագծեր է հաստատում և թողարկում: Այդ պատճառով հայտնվել է թե՛ քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների, թե՛ տեսչական մարմնի և թե՛ քաղաքաշինության կողմիտեի ուշադրության կենտրոնում: Նպատակը կարծում եմ մեկն է, որ աշխատանքը կատարում է շուկայականից ավելի ցածր գներով, բայց միևնույն ժամանակ ասեմ, որ մեր ցանկերում այդ կազմակերպությունն այս պահին վատ համբավ է վայելում:

Սաթենիկ Մկրտչյան

-Ըստ օդում կախված լուրերի, այս ընկերության տնօրենը փոխկապակցված է քաղաքապետարանի աշխատակցի հետ: Ես սա չեմ ստուգել և կիսնդրեմ Դուք էլ ուշադիր լինեք:

Հրայր Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Հռիփսիմե Առաքելյան, խնդրեմ:

Հռիփսիմե Առաքելյան

-Հարցս հետևյալն է. 2018թ. հոկտեմբերի 13-ին՝ Երևանի ավագանու առաջին նիստին, քաղաքապետ Հայկ Մարությանը լրագրողների հետ ասուլիսի ժամանակ և նաև դրանից հետո՝ խոստացել էր, որ տրանսպորտի խնդիրը Երևան քաղաքում կլուծվի երկու տարվա ընթացքում: Ես շատ լավ հիշում եմ այդ ամենը և նույնիսկ լրատվամիջոցներն էլ նշեցին, որ երկու տարի է ասվել, եկեք սպասենք:

Ինչպես ասվում էր, 100 տոկոսով պետք է ամբողջությամբ կարգի բերվեր և մենք պետք է ունենայինք նոր տրանսպորտային համակարգ: Այս հարցի վերաբերյալ բազում խնդիրներ կան՝ թե՛ մեծ ավտոբուսների հետ կապված, թե՛ փոքր ավտոբուսների մրցույթների հետ կապված, որոնք նախատեսված կարգին չեն համապատասխանում, քանի որ սրանք միկրոավտոբուսներ են: Ըստ կարգի՝ պետք է ավելի մեծ ավտոբուսներ լինեն: Ես ուղղակի ուզում եմ հասկանալ, այս երկու տարվա ընթացքում գործընթացն ինչ փուլում է և մինչև ս.թ. հոկտեմբերի 13-ը Երևանի տրանսպորտային ցանցը փոխված կլինի, թե ոչ:

Հրայր Սարգսյան

-Շնորհակալություն, կարծում եմ Ձեր երկրորդ հարցը հոետորական էր:

Իհարկե մինչև ս.թ. հոկտեմբերի 13-ը չենք ունենա նոր տրանսպորտային ցանց: Հարցը մեր առաջնային խնդիրներից մեկն է: Այս պահի դրությամբ բավականին մեծ աշխատանք է կատարվել: Ես հասկանում եմ, որ քաղաքացիներին չի հետաքրքրում այն աշխատանքը, ինչ կատարվում է այստեղ: Նրանց հետաքրքրում է, որ փողոցներում երթևեկեն տարբեր չափերի ավտոբուսներ, ժամանակին մոտենան կանգառներին, բայց այդ ամբողջ աշխատանքը բավականին ծավալուն է: Ես վստահաբար ասում եմ, որ այդ աշխատանքների արդյունքում կան այն լուծումները, որը մեզ հնարավորություն կտա, որպեսզի մենք 2021թ. էական փոփոխություններ ունենանք, եթե այլ խոչընդոտներ չլինեն: Այդպիսի խոչընդոտ էր «COVID-19» համավարակը: Մենք 2018 թվականին խոսում էինք այս մասին և ոչ ոք չէր մտածում, որ 2020թ. կլինի «COVID-19» համավարակը: Հայտարարվել էր 12 մետր երկարությամբ ավտոբուսների ձեռքբերման մրցույթը, որի վերաբերյալ մեր գործընկերները և հանրությունը կարող էին տեղեկանալ կայքերով: Այսինքն այդ աշխատանքն իրականացվել է: Մրցույթի մասնակից է եղել երկու կազմակերպություն, որից մեկը տեխնիկական բնութագրին չի համապատասխանել, իսկ մյուս կազմակերպության մոտ բացակայել են բավականին լուրջ փաստաթղթեր և մրցույթը չեղարկվել է:

Մեր կողմից հարցում է ուղարկվել բոլոր արտադրողներին և մրցույթի պայմաններով հետաքրքրված կազմակերպություններին՝ հասկանալու համար, թե ինչու մասնակցություն չի եղել: Պատճառաբանությունները եղել են տարբեր: Քանի որ տարբեր կազմակերպություններ ունեն պայմանագրային պարտավորություններ և իրենց արտադրությունները պլանավորում են մեկ տարվա կտրվածքով, «COVID-19» համավարակով պայմանավորված շատ կազմակերպություններ պարզապես ամիսներ շարունակ չեն աշխատել: Այդ կազմակերպությունները հիմա ստիպված են կատարել կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունները: Կարծում եմ ակնհայտ է, որ քաղաքային իշխանությունը ջանք չի խնայում, որպեսզի ձեռքբերենք այդ ավտոբուսները և ի վերջո լուծենք տրանսպորտային համակարգի թնջուկը և մեր քաղաքացիները երթևեկեն բարեկեցիկ ավտոբուսներով: Մենք աշխատանքներ իրականացնում ենք, որպեսզի 2021թ. ունենանք 2020թ.-ից էական բարվոք տրանսպորտային համակարգ:

Ինչ վերաբերում է այն հաշվետվությանը, որ իբր շեղվել ենք, ես կասեմ, որ մեր տեսլականն այդ հաշվետվության շրջանակում է: Մենք աշխատում ենք ըստ այդ հաշվետվության, որպեսզի Երևան քաղաքում ունենանք բարեկեցիկ տրանսպորտային համակարգ: Այդ տրանսպորտային համակարգը Երևան քաղաքում բազում խնդիրներ կլուծի:

Միևնույն ժամանակ կցանկանայի նշել, որ Երևան համայնքում տրանսպորտի ֆիզիկապես առկայությունը կարևոր չէ, այլ նաև դրա կառավարումն է շատ կարևոր: Ես ցավոք կարող եմ ասել, որ վերջին 10-15 տարվա ընթացքում Երևանում երթևեկության կազմակերպումը շատ դեպքերում փորձնական տարբերակով է իրականացվել: Որոշ լուսացույցեր կամ գծանշումներ փոփոխության են ենթարկել և փորձել են հասկանալ այդպիսի երթևեկությունը լավ է, թե՛ վատ: Այնինչ՝ աշխարհը շարժվել է առաջ, կան տարբեր ծրագրեր, որոնք հնարավորություն են տալիս մոդելավորել այդ տրանսպորտային համակարգը և ճիշտ որոշում կայացնել: Այդ ծրագրային ապահովումը և կարողությունը քաղաքապետարանը չի ունեցել: Այնուամենայնիվ, մոտակա ժամանակներում մրցույթ կհայտարարենք, որպեսզի ձեռք բերենք այդ ծրագիրը և կարողանանք մնացած խնդիրները նույնպես լուծել: Նորից եմ կրկնում մեր հանրության համար, որպեսզի ավելի պարզ լինի՝ եթե մենք ունենանք տրանսպորտային միջոցներ, բայց չունենանք երթևեկության կազմակերպման տարբերակը, ապա լավագույն արդյունքի չենք կարող հասնել:

Խնդիրները բազում են, բայց վստահեցնում եմ Ձեզ, որ եթե արտառոց դեպքեր չլինեն, 2021 թվականին՝ 2020 թվականի հետ համեմատած, տրանսպորտային համակարգում էական բարեփոխումներ կունենանք:

Հոփսիմե Առաքելյան

-Պարոն Սարգսյան, շատ լավ բացատրում եք, այս բացատրությունը ես բազում անգամներ լսել եմ, շնորհակալություն:

Որպես Երևանի քաղաքացի եմ հարցնում, ոչ թե որպես Երևանի ավագանու անդամ՝ Դուք կարո՞ղ եք ինձ հստակ ասել Երևանում նոր տրանսպորտային ցանցը ե՞րբ է ներդրվելու: Այսինքն՝ այն ժամկետը, երբ մեր քաղաքացիները կօգտվեն նոր տրանսպորտային ցանցից: Դուք ասում եք 2021թ., իհարկե «COVID-19» համավարակը մոտիվացնելով, որ դա պատճառ է եղել խնդիրները չկարգավորելու համար: «COVID-19» համավարակի ժամկետը հանած, 2021թ. ե՞րբ է պատրաստ լինելու Երևանի նոր տրանսպորտային ցանցը:

Հրայր Սարգսյան

-2021թ. բոլոր 820 ավտոբուսները, որոնք անհրաժեշտ են նոր երթուղային ցանցը սպասարկելու համար, հնարավոր չէ ձեռքբերել: Անգործության մեջ չեք կարող մեզ մեղադրել, քանի որ մեր աշխատանքի ապացույցները կան:

Հոփսիմե Առաքելյան

-Պարոն Սարգսյան, ե՞րբ կլինի: Հարցս սա է: Դուք ճանապարհային քարտեզ չունե՞ք, թե երբ կլինի:

Հրայր Սարգսյան

-Ճանապարհային քարտեզ ունենք և այդ քարտեզով պետք է մինչև տարվա վերջ ունենայինք 12 մետր երկարությամբ ավտոբուսներ: Խնդիրներ առաջացան և այդ ավտոբուսները չունենք: Այժմ նոր մրցույթ պետք է հայտարարենք և եթե մրցույթը կայանա, դեկտեմբերին կունենանք հաղթող և կիմանանք, թե այդ ավտոբուսները երբ կմատակարարվեն: 820 ավտոբուսի ներկրման և երթուղային կազմակերպման համար ամենալավագույն դեպքում երկու տարի ժամանակ է պետք:

Հոփսիմե Առաքելյան

-Այսինքն մենք դեռ ժամկետների մեջ հստակեցում չունե՞նք:

Հրայր Սարգսյան

-Այո՛, այս պահի դրությամբ ժամկետների մեջ դեռ հստակություն չունենք:

Հոփսիմե Առաքելյան

-Երկրորդ հարցս վերաբերում է գիշերային ժամերին իրականացվող հրավառություններին: Մենք կողմ քվեարկեցինք այն նախագծին, որ քաղաքում ժամը 23.00-ից հետո պետք է աղմուկ չլինի: Առհասարակ ինչպե՞ս է վերահսկվում այս հարցը, ովքե՞ր են պատասխանատուները: Երևանի բոլոր վարչական շրջաններում կա այս խնդիրը: Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում այս ուղղությամբ:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության պետ Հովիկ Սաֆարյանը:

Հովիկ Սաֆարյան

- Տիկին Առաքելյան, ավագանու կողմից ընդունվել է որոշում, համաձայն որի՝ ժամը 23.00-ից հետո արգելվեց լուրջան խախտումն առևտրի և ծառայությունների օբյեկտների կողմից: Հաճախ այդ խախտումները կատարում են ֆիզիկական մասնավոր անձինք: Այդ անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնում է ոստիկանությունը: Ոստիկանությունը շատ հաճախ հայտնաբերում է այդ իրավախախտներին: Մենք զանգվածային լրատվության միջոցներով տեղեկացել ենք, որ այդ դեպքերը հայտնաբերվել են և իրավախախտներին ենթարկել են վարչական պատասխանատվության: Օբյեկտների դեպքում, երբ բնակիչներից թե՛ զժերով ստանում ենք բողոքներ, դիմում ենք նաև առողջապահական տեսչական մարմին, որպեսզի արձանագրենք ժ.23.00-ից հետո լուրջան խախտման դեպքերը և դրանից հետո հարուցում ենք վարչական վարույթ և ենթարկում ենք վարչական պատասխանատվության:

Հռիփսիմե Առաքելյան

-Մենք ունենք վիճակագրություն, թե Երևան քաղաքում ավագանու որոշումն ընդունելուց հետո քանի վարչական վարույթ է իրականացվել այս մասով:

Հովիկ Սաֆարյան

-Հստակ վիճակագրություն դեռևս չունենք, քանի որ նախագիծը նոր էր և «COVID-19» համավարակի պայմաններում շատ օբյեկտներ դեռևս չէին աշխատում: Վերջին օրերի ընթացքում ստացել ենք մի քանի ահազանգ, դիմել ենք և սպասում ենք արդյունքներին: Կարծում եմ մոտ երկու ամսից կունենանք որոշակի վիճակագրություն:

Հռիփսիմե Առաքելյան

-Շատ լավ, եթե քաղաքացին ահազանգել է և իրավախախտում կատարողը ֆիզիկական անձ է եղել, ի՞նչ ընթացք է ստանում ահազանգը:

Հովիկ Սաֆարյան

-Եթե իրավախախտում թույլ է տալիս ֆիզիկական անձը, այսինքն ինչ-որ մեկը շենքի բակում իր մեքենայի մեջ բարձր երաժշտություն է միացրել, դա ոստիկանության գործողությունների շրջանակում է: Իսկ եթե օբյեկտ է՝ հաղորդումը տալիս են քաղաքապետարանի թե՛ զժով և մենք զբաղվում ենք այդ հարցով:

Հռիփսիմե Առաքելյան

-Շնորհակալություն:

Հրաչյա Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Անի Խաչատրյան, խնդրեմ:

Անի Խաչատրյան

-Հարցս հետևյալն է. ցանկանում եմ իմանալ երկու տարվա ընթացքում եղե՞լ է Երևանի ավագանու գոնե մեկ նիստ, որին ներկա են եղել ավագանու 65 անդամ, այսինքն՝ ԻՍ ՔԱՅԼԸ խմբակցության ավագանու 57 անդամ:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

Արմինե Վարդանյան

-Այս պահին չեմ կարող հիշել, կարող եք գրավոր դիմել, կտրամադրենք տեղեկատվությունը:

Անի Խաչատրյան

-Տիկին Վարդանյան, ես վստահ եմ, որ Դուք տեղեկատվությունն ինձ կտրամադրեք և այնտեղ կլինի, որ նման նիստ չի եղել: Վստահ եմ, որ Դուք այժմ էլ պատասխանը գիտեք, ուղղակի չեք ուզում ասել:

Երկու տարվա ընթացքում չի եղել որևէ ավագանու նիստ, որտեղ ներկա են եղել ԻՍ ՔԱՅԼԸ խմբակցության ավագանու 57 անդամ: Նույնիսկ առաջին նիստին՝ Երևանի քաղաքապետի երդման արարողության օրը: Շնորհակալություն:

Հրաչյա Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՍ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Զաքարյան, խնդրեմ:

Լևոն Զաքարյան

-Ի՞նչ պարտավորություն ունի «Դավարս» ընկերությունը շինարարական աղբի տեղափոխման հարցում: Վերջին շրջանում անընդհատ նշվում է, որ քաղաքացիները շինարարական աղբը թափում են ոչ սահմանված վայրերում, տրվում են որակումներ, սակայն դրա փոխարեն այլ տարբերակ չի առաջարկվում:

Խնդրում եմ ներկայացնել «Դավարս» ընկերության պարտավորությունները:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը:

Արսեն Կարոյան

-«Դավարս» ՍՊ ընկերության պարտավորությունը չնախատեսված վայրերից, ըստ անհրաժեշտության, ամենօրյա ռեժիմով շինարարական աղբի հավաքումը և տեղափոխումն է աղբավայր:

Լևոն Զաքարյան

-Արձանագրենք, որ քաղաքացիները սխալ չեն վարվում, երբ շինարարական աղբը տեղափոխում են աղբամանների մոտ, քանի որ այլ տարբերակ չի առաջարկվում:

Օրինակ՝ Աջափնյակ վարչական շրջանում շինարարական աղբ թափելու համար կահավորվել է առանձին, հատուկ վայր: Առաջարկում եմ շինարարական աղբ թափելու համար բոլոր վարչական շրջաններում կառուցել նման առանձին վայրեր: Կարելի է նաև քաղաքացիներին իրազեկել, որ շինարարական աղբն այսուհետ պետք է տեղափոխվի Նուբարաշենի աղբավայր:

Անդրադառնամ այլ թեմայի. գրությամբ առաջարկել էի Մելիք Ադամյան և Հանրապետության փողոցների միջնամասում արգելափակոցներն ապամոնտաժել և ստուգել դրանց օրինականությունը: Ի պատասխան գրության՝ հայտնել եմ. «Համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության, հասարակական կարգի պահպանության ծառայության և Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի կողմից ներկայացված տեղեկատվության՝ Մելիք Ադամյան և Հանրապետության փողոցների միջնամասում արգելափակոցների տեղադրման թույլտվություն չի տրամադրվել: Տեղեկացնում եմ, որ ուղեփակոց տեղադրելու համար Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման թույլտվությունների տրամադրման և քաղաքաշինական փաստաթղթերի համաձայնեցման գործընթացները կանոնակարգող ՀՀ կառավարության 19.02.2015թ. հ.596-Ն որոշմամբ որևէ ընթացակարգ նախատեսված չէ: Միաժամանակ բացակայում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված ժամկետներում նույն օրենսգրքի 154-րդ հոդվածով արձանագրություններ կազմելու հիմքը»:

Ինձ առաջարկվել է նմանատիպ խնդիրների կարգավորման նպատակով կազմակերպել համալիր քննարկումներ:

Ես նման պատասխան չեմ ակնկալում: Ստացվում է, եթե հարցը օրենքով չի կարգավորվում, համապատասխան ֆինանսական միջոցներ ունենալու դեպքում, ցանկացած մարդ կարող է պատվիրել արգելափակոցներ և տեղադրել:

Այս հարցի վերաբերյալ դարձյալ կներկայացնեմ գրություն: Պնդում եմ, որ ինքնիրավչություն է, անհրաժեշտ է հեռացնել այդ արգելափակոցները:

Երկրորդ հարցը վերաբերում է նոր տեղադրվող վերելակներին:

Սոցիալական ցանցով ինձ տեղեկացրել էին, որ վերելակների տեղադրման աշխատանքները երկար են տևում:

Տարբեր պատճառաբանություններ են եղել.

Բնակիչներին ասել են գործադուլ են անում, քանի որ Երևանի քաղաքապետարանը գումար չի տրամադրում: Ասել են նաև, որ հարցը կապված է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ:

Քանի որ նախատեսվել է փոխել 500 վերելակ, պետք է մարդկանց հստակ իրազեկել աշխատանքների երկարաձգման պատճառների մասին: Անհրաժեշտ է պարզել խոչընդոտների օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Կամո Արեյան

-Ապրանք ներկրողի հետ կնքվել է կապալի պայմանագիր և կա սահմանված ժամկետ: Ժամկետն ավարտվում է ս.թ. հոկտեմբերի 31-ին: Այս պահի դրությամբ ապրանքի ձեռքբերման և տեղադրման պայմանագրի շրջանակներում մայրաքաղաք է ներկրվել 220 վերելակ, 134-ը մոնտաժված է, 47-ն անցել է «ԱԻՆ տեխնիկական անվտանգության» ՊՈԱԿ-ի փորձաքննությունը և հանձնված է լիարժեք փորձաքննության, 87-ը փորձաքննության փուլում է:

Շարունակվում են 134 վերելակի մոնտաժման աշխատանքները: Առաջիկա 10 օրվա ընթացքում վերելակների քանակը կհամալրվի ևս 170 վերելակով: Մայրաքաղաքում կունենանք 314 վերելակ, ներկրումը կշարունակվի մինչև թվով 500 վերելակի ապահովումը:

Ինչ վերաբերում է Ձեր հարցադրմանը՝ սոցիալական ցանցերով, թե՛ զձերով բնակիչների կողմից ներկայացված անհանգստությունների մասով, ունի հետևյալ բացատրությունը.

Կապալառու կազմակերպությանը տրված է ցուցում. աշխատանքների տեխնիկական հսկողությունը, փորձաքննության տեխնիկական եզրակացությունը տալիս է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը՝ որպես լիազորված մարմին: Եթե վերելակը տեղադրված է և չի անցել փորձաքննություն, ոչ ոք իրավունք չունի այդ վերելակը շահագործել: Հետևաբար, վերելակի մոնտաժումը չի տևում 1 կամ 2 օր: Ըստ շենքի հարկայնության աշխատանքների տևողությունը տարբեր է: Հնարավոր է վերելակի մոնտաժման աշխատանքներն ավարտվեն, բայց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը դեռևս փորձագիտական եզրակացություն տրամադրած չլինի: Դրա պատճառով աշխատանքները

տևում են օրեր և մեր կողմից տրված ցուցումով կապալառուն չի շահագործում վերելակը: Քանի որ այդ ամենը կարող է ունենալ անկանխատեսելի հետևանքներ: Այսինքն, մոնտաժման աշխատանքներից մինչև փորձագիտական եզրակացություն ստանալն ընկած ժամանակահատվածը բնակիչների մոտ առաջացնում է անհանգստություն:

Անդրադառնալով ֆինանսավորման հետ կապված հարցին, նշեմ, որ այդպիսի խնդիր չկա: Երևանի քաղաքապետարանը պատրաստ է ֆինանսավորել կապալառուին, եթե ներկայացվի տեխնիկական բնութագրով նախատեսված կատարողականը: Ունենք փոխարինումների սկզբունք՝ բարձր հարկայնությունից սկսած: Ամենաբարձր հարկերից սկսած կատարողականը ներկայացնելու դեպքում ֆինանսավորումը կտրամադրվի: Երեկ կապալառուի հետ համատեղ քննարկում է կայացել, վաղը պետք է ներկայացվի բարձր հարկայնությամբ շենքերի առաջին խմբաքանակը, որի հիման վրա կստանա ֆինանսավորում:

Գործադուլի հետ կապված, հայտնում եմ, որ այն հանդիսանում է տվյալ ՄՊ ընկերության ներքին խնդիրը: Քաղաքապետարանի աշխատակազմը հանդիպել է նրանց հետ: Նույն օրը շրջայց եմ կատարել Նոր Նորք և Ավան վարչական շրջաններ և հաջորդ օրը հետևել եմ աշխատանքներին: Աշխատանքների ընթացքը լիարժեք վերականգնված է, կազմակերպությունում անհանգստությունը բացակայում է:

Ես խնդրանք ունեմ բոլորին. ծրագիրը տեխնիկապես բարդ է, ժամկետներում շտապողականությունը, տեխնիկական պահանջների որևէ խախտումը հետագայում կլինի աններելի: Ժամկետների առումով Ձեր անհանգստության կապակցությամբ, հայտնում եմ, որ երեկ կապալառուն վստահեցրել է, որ ծրագրի որևէ ձախողում չի կարող լինել: Ծրագիրն ամբողջությամբ կավարտվի այս տարվա ընթացքում:

Լևոն Զաքարյան

-Պարոն Արեյան, աշխատանքի բերումով տեղյակ եմ, թե վերելակներն ինչ փորձաքննություն են անցնում: Օրենքի պահանջին համապատասխան, ըստ ժամանակացույցի, վերելակները պարբերաբար անցնում են փորձաքննություն: Գիտակցում եմ դրա կարևորությունը: Կարծում եմ, անհրաժեշտ է լրատվությամբ քաղաքացիներին բացատրել վերելակների փոխարինման և տեղադրման գործընթացի մասին:

Կամո Արեյան

-Համամիտ եմ, վարչական շրջանների ղեկավարները տեղում իրականացրել են բացատրական աշխատանքներ: Վստահեցնում եմ Ձեզ, որ այլևս այդ բացատրական աշխատանքներն տվել են իրենց արդյունքը: Կան դժվարություններ, բայց դրանք հաղթահարելի են:

Հրաչյա Սարգսյան

- Պարոն Զաքարյան, 1-ին հարցի վերաբերյալ ինչու՞ է Ձեզ մոտ այնպիսի ընկալում, որ շինարարական կամ խոշոր եզրաչափի աղբի հետ կապված այլընտրանք չկա: Երևանի քաղաքապետարանի կողմից սոցիալական ցանցերով բավականին երկար ժամանակ տրվել է իրազեկում, որ շինարարական կամ խոշոր եզրաչափի աղբը պետք է տեղափոխել Նուբարաշեն վարչական շրջանում գտնվող աղբավայր: Ներկայումս համայնքն այդպիսի պարտավորություն չունի, որ երևանցիների շինաղբը համայնքային բյուջեի հաշվին պետք է տեղափոխի Նուբարաշեն վարչական շրջանում գտնվող աղբավայր: Նախատեսվում են որոշ փոփոխություններ. վարչական շրջաններում կենցաղային աղբի համար կլինեն համապատասխան տարածքներ և համայնքի կողմից որոշակի չափաբաժնով կոշտ կենցաղային աղբը կտեղափոխվի:

Հրաչյա Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Արմեն Ներսիսյան, ինդրեմ:

Արմեն Ներսիսյան

- 2021 թվականի հունվար ամսից մինչև 2026 թվականի հունվարի 1-ը նախատեսվում է հողի գույքահարկի թանկացում: Որքա՞ն հարմարավետ կլինի այդ թանկացումը երևանցիների համար: Մարդիկ ունեն վարձակալությամբ վերցրած տարածքներ, խանութներ և թանկացումների ժամանակ կլինեն վճարների բարձրացում: Նախատեսվող թանկացումները, եթե կլինեն ի նպաստ երևանցու, ապա դա կլինի իրավացի, բայց այս թանկացումները ոչինչ չեն տա: Ներդրողներ չեն լինի և սուպերմարկետներում ապրանքները կթանկանան:

Հարցս հետևյալն է՝ թանկացումները կլինե՞ն ի նպաստ երևանցիների, թե ոչ, և բյուջեի ավելացման դեպքում ի՞նչ աշխատանքներ կիրականացվեն Երևանում: Գարեգին Նժդեհի փողոցի և Արշակունյաց պողոտայի հանգույցում էստակադայի կառուցման աշխատանքներ նախատեսվո՞ւմ են:

Հրաչյա Սարգսյան

-Պարոն Ներսիսյան, երբ կհաստատվի Երևանի 2021թ. 2022թ. 2023թ. բյուջեն, ապա ընդհանուր կորոշենք: Կարծում եմ, այն դրամական միջոցները, որոնք գույքահարկի և ոչ միայն գույքահարկի տեսքով կհավաքագրվի համայնքի կողմից, ավագանին կորոշի բյուջեի ծախսերի ուղղվածությունը:

Ինչ վերաբերում է Գարեգին Նժդեհի փողոցի և Արշակունյաց պողոտայի հանգույցում էստակադայի կառուցման աշխատանքներին, նշեմ, որ այս պահի դրությամբ այդ ծրագրի

փոխարեն նախագծման աշխատանքներ են իրականացվում Արշակունյաց-Իսակովի պողոտաներում ճանապարհահատված կառուցելու համար: Այդ հանգույցի կառուցումից հետո, հնարավոր կլինի անդրադառնալ Գարեգին Նժդեհի փողոցի և Արշակունյաց պողոտայի հանգույցում աշխատանքների իրականացմանը: Այնուամենայնիվ, կցանկանայի նշել, որ Երևան համայնքում ունենք բազում խնդիրներ. օրինակ՝ Ձեր գործընկերոջ կողմից բարձրացված հարցը, տրանսպորտային համակարգի վերաբերյալ: Հավաքագրված հավելյալ գումարները կներդրվեն տրանսպորտային և ճանապարհաշինության համակարգերում: Վերջին 10 տարվա ընթացքում բավականին քիչ կոյուղագծեր են կառուցվել, որն իմ պատկերացմամբ, Երևանի համար կարևորագույն խնդիրներից է, այն հատկապես կարևոր է առողջապահական առումով: Դա է հանդիսանում պատճառը, որ նոր կոյուղատար համակարգեր կառուցելու համար 2020 թվականի բյուջեում մոտավորապես 280 մլն դրամ գումար հատկացվեց:

Արմեն Ներսիսյան

-Կարծում եմ, վերջին երկու տարվա ընթացքում քիչ խնդիրներ են լուծվել երևանցիների համար: Ինչպես արդեն նշեց իմ գործընկերուհին, տրանսպորտային խնդիրը չի լուծվել, նաև տարբեր խոստումներ իրականություն չեն դարձել: Հնարավոր է, այդ գումարների ավելացման դեպքում պարզապահարներն ավելանան: Խնդրում եմ պարզաբանեք:

Հրաչյա Սարգսյան

-Կարծում եմ, երկու տարվա ընթացքում քաղաքային իշխանությունը ծավալային առումով բավականին մեծ աշխատանք է իրականացրել: Այո, կան խնդիրներ, չեմ հերքում: Կարող եմ թվարկել Երևան համայնքում երկու տարվա ընթացքում լուծված խնդիրները՝ աղբահանության, կանաչապատման խնդիրները.

Կանաչապատման աշխատանքներն այս տարի մեկնարկել է և արդյունքները գոհացուցիչ են:

Դավթաշեն և Նուբարաշեն վարչական շրջաններում ունենք լուսավորության անցկացման ծրագրեր:

Մոտակա մեկ ամսվա ընթացքում մոտ 40-ից ավելի փողոցներում կիրականացվեն լուսավորության անցկացման աշխատանքներ:

80 խաչմերուկում կլինեն հատուկ լուսավորության համակարգեր և քաղաքացիների անվտանգության ապահովման նկատառումներից ելնելով դրանք կաշխատեն ավելի երկար ժամանակ:

Առկա է հետիոտնային կանչի ռեժիմով աշխատող թվով 57 լուսացույցի տեղադրման ծրագրի, որոնց նախագծման աշխատանքները պատրաստ են և մինչև տարեվերջ կիրականացվի 30 լուսացույցի տեղադրման աշխատանքները:

Այս տարի նախատեսվում է Արտաշեսյան պողոտայից դեպի Շիրակի փողոց ավելացնել տրոլեյբուսի մոտ 3 կմ երկարությամբ գիծ:

Փոփոխություններ են նախատեսվել սոցիալական ոլորտում, իրականացվել են կառուցվածքային փոփոխություններ:

Այսպիսով, ցանկանում եմ նշել, որ իրականացվել է բավականին ծավալուն աշխատանք, բայց կան բազմաթիվ խնդիրներ:

Իրականացվում է 500 վերելակի փոխարինման աշխատանքներ: Պետք է հաշվի առնել, որ բաժնային սեփականության հարց կա, որն ընդգրկված է պարտադիր նորմերի մեջ և իրավական առումով վերելակների փոխարինման աշխատանքները պետք է իրականացվեն բնակիչների կողմից: Սակայն այդ աշխատանքներն իրականացվում են Երևան համայնքի կողմից: Այսինքն, համայնքի կողմից հավաքագրված միջոցները ներդրվում են բազմաբնակարան շենքերում առկա խնդիրների լուծման աշխատանքների համար:

Իրականացվում է նաև մանկապարտեզների կապիտալ շինարարություն:

Արմեն Ներսիսյան

-Պարոն Սարգսյան, հաշվի առնելով, որ 2021 թվականի հունվարի 1-ից պետք է թանկանա գույքահարկը և Երևան համայնքի բյուջե կհավաքագրվի շատ գումար, խնդրում եմ պարզաբանել պարզևավճարները կավելանա՞ն, թե ոչ:

Հրաչյա Սարգսյան

-Երևան համայնքի բնակիչների կողմից վճարված գումարների հաշվին ավելի շատ պարզևավճարների տրամադրման վերաբերյալ խոսակցություններ չկան:

Արմեն Ներսիսյան

-Երկրորդ հարցը վերաբերում է Էրեբունի վարչական շրջանի Վարդաշեն թաղամասում գտնվող վթարային երկու շենքին, որոնց վերաբերյալ բազմիցս խոսել եմ: Խնդրի մասին տեղեկացված է Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը: Վթարային այդ շենքերում բնակվում են շուրջ 180 երեխա: Խնդրում եմ նշված շենքեր այցելեք և ծանոթացեք իրավիճակին:

Հրաչյա Սարգսյան

-Պարոն Ներսիսյան, Ձեզ թվում է Արցախի փողոցի հ. 8 և հ.8/1 շենքերի բնակիչներն ավելի վա՞տ էին ապրում:

Արմեն Ներսիսյան

-Բոլոր վթարային շենքերում վատ վիճակ է, բայց Վարդաշեն թաղամասի այդ շենքերում ավելի վատ իրավիճակ է, կոյուղի գոյություն չունի:

Հրաչյա Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյան, խնդրեմ:

Սուրեն Էյրամջյան

-Պարոն Սարգսյան, եթե չեմ սխալվում, Երևանի 2020 թվականի բյուջեում նախատեսվել էր 150 մլն դրամ՝ դիտահորերի կափարիչների հարթեցման համար: Գիտեմ, որ այդ աշխատանքները «Վեոլիա ջուր» ընկերության պարտականությունն է և ասֆալտապատման աշխատանքների ավարտից հետո առաջացած անհարթությունների պատճառով քաղաքացիների կողմից լինում են բազմաթիվ բողոքներ: Խնդրում եմ ներկայացնել այս պահի դրությամբ այդ աշխատանքներն ի՞նչ ընթացքում են:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանը:

Գրիգոր Հարությունյան

-Տեղեկացնում եմ, որ դիտահորերի կափարիչների հարթեցման աշխատանքների համար նախատեսված է եղել 100 մլն դրամ:

1-ին անգամ՝ փետրվար ամսին հայտարարված մրցույթում հաղթող չի եղել:

2-րդ անգամ՝ «COVID-19» համավարակով պայմանավորված բանկային երաշխիք չի ներկայացվել:

3-րդ անգամ՝ մոտ մեկ ամիս առաջ, գուցե գների հետ պայմանավորված մասնակից չի եղել: Մրցույթի վերաբերյալ հայտարարությունը մի փոքր փոփոխությամբ հրապարակվել է և կրկին անգամ մասնակից չի եղել: Մրցույթներին մասնակից չլինելու վերաբերյալ առկա են բոլոր փաստաթղթերը: «Նիկոլ Դուման» ընկերության կողմից եղել է գնային առումով թանկ առաջարկ. 1 տոննա թուջը գնում են 50000 ՀՀ դրամ և յուրաքանչյուր կափարիչը գնահատվել էր 44 մլն դրամ, որն անհեթեթություն է:

Սուրեն Էյրամջյան

-Շնորհակալություն, հետագայում ի՞նչ է նախատեսվում:

Հրաչյա Սարգսյան

-Հետագայում պետք է մրցույթ հայտարարել և հաղթող լինելու դեպքում կիրականացվեն աշխատանքները: Մրցույթը չկայանալու դեպքում, կունենանք խնդիր: Այս հարցը նման է վերելակների փոխարինման աշխատանքներին: Այսինքն համայնքը

պարտավորություններ չունի, այնուամենայնիվ, ցանկություն կա իրականացնել այդ աշխատանքները, սակայն արդեն մի քանի անգամ մրցույթը չի կայացել:

Սուրեն Էյրամջյան

-Երկրորդ հարցը.

Ինձ դիմել են Ներքին Չարբախ թաղամասի 12-րդ փողոցի բնակիչները, ովքեր ԶԼՄ-ից տեղեկացել էին թվով 7 փողոցի մասին, որտեղ այս տարի կատարվել էր կոյուղատար համակագրերի շինարարություն: Բնակիչները խնդրում են իրենց թաղամասում ես կատարել այդ աշխատանքները: Գիտեմ, այս տարի հնարավոր չէ այդ աշխատանքները կատարել: Հնարավոր է աղյուք 2021թ.-ին կատարել այդ աշխատանքները, որովհետև մարդիկ այդտեղ տասնամյակներ շարունակ բնակվում են և դա ազդում է կյանքի որակի վրա: Իմ կողմից ներկայացված գրությանն ի պատասխան՝ տեղեկացրել են, որ նախատեսվում է հայտարարել մրցույթ: Խնդրում եմ պարզաբանել աշխատանքներն ի՞նչ փուլում են գտնվում:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Կամո Արեյան

-Այս տարի 25 հասցեի համար պետք է կայանար մրցույթ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման մրցույթը ձախողեց ոչ բարեխիղճ հայտատուն: Որոշ մրցույթներ կայացել են, Արաբկիր վարչական շրջանի 3 փողոցի համար, որոնք ամենախոցելի են, կապալի պայմանագիրը կնքվել է, աշխատանքներն ընթացքի մեջ են և շուտով կավարտվեն: Թվով 7 հասցեում նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման մրցույթը կայացել է: Վերահայտարարվել է մնացած 17 մրցույթը և հուսով եմ մրցույթները կկայանան:

Պարոն Սարգսյանը հարցերից մեկում մեկնաբանեց, որ աշխատում ենք նախագծանախահաշվային փաստաթղթերը պատրաստել այս տարի, որպեսզի 2021 թվականի բյուջետային տարվա մեկնարկից հայտարարվեն կապալի մրցույթները:

Երևանում շուրջ 120 կմ ծավալով 90-ից ավելի թաղամասեր ի սկզբանե չունեն կոյուղի, այդ թվում բազմաբնակարան շենքերի որոշակի հատվածներ, որը մոտ 15000 շահառուին բաժին ընկնող հատված է: Ներքին Չարբախ թաղամասն այդ բնակավայրերից մեկն է: Այդ թաղամասի 4 կամ 7 փողոցի ընդհանուր տարածքը շուրջ 2 կմ է: Ի պատասխան Ձեր հարցադրմանը՝ պատվիրել ենք նախագծանախահաշվային փաստաթղթերի մրցույթ: Կլինի նախագծանախահաշվային փաստաթուղթը և պահանջվող գումարը ու Երևանի բյուջեի սահմաններում կիրականացվեն աշխատանքները: 2020թ. այդ աշխատանքները չեն կատարվի: Այս տարի նախագծանախահաշվային փաստաթուղթ ունենալու դեպքում, որն ի

դեպ, արդեն պատվիրված է, հաջորդ բյուջետային տարում կփորձենք որոշակի ծավալով աշխատանքներ իրականացնել: Արդյունքների մասին Ձեզ կտեղեկացնեմ:

Հրաչյա Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արթուր Իսպիրյան, խնդրեմ:

Արթուր Իսպիրյան

- Հարցս վերաբերում է տրանսպորտին:

Առավոտյան ժամը 08.00-ից քաղաքը պատվում է տրանսպորտային միջոցների արտանետած սև ծխով: Ուզում եմ հասկանել ավտոբուսները տեխնոնում անցնում են, թե ոչ: Ի՞նչ կարելի է անել, որ այդ ծուխը չլինի: Վարորդները կփաստեն, թե ինչպիսի ծուխ է արտանետվում հանրային տրանսպորտի՝ հատկապես «Hyundai» մակնիշի ավտոբուսների կողմից: Արդյոք հնարավոր է տեխնիկական միջոցներով դա կարգավորել:

Հրաչյա Սարգսյան

-Համաձայն օրենքի՝ հանրային տրանսպորտը տարեկան 2 անգամ պետք է տեխնոնություն անցնի: Ի տարբերություն մարդատար ավտոմեքենաների, ավտոբուսների համար նախատեսված է տարեկան 2 անգամ տեխնոնություն: Գիտենք, որ անգամ մարդատար ավտոմեքենաների դեպքում տեխնոնությունն իր բովանդակությամբ չի համապատասխանում այն տեսլականին, որն ամրագրված է օրենքով: Հանրային տրանսպորտի որոշակի մասը շահագործվում է Երևան համայնքի ենթակայության օպերատորի՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից, իսկ մյուս մասը՝ մասնավոր օպերատորների կողմից: Հանձնարարական կտրվի «Երևանտրանս» ընկերությանը, որպեսզի գծային հսկիչների միջոցով հսկողություն սահմանեն և բացառեն նմանատիպ դեպքերը: Ենթադրում եմ, որ այդ ամենը կարող է լինել մեքենայի անսարքության հետևանք:

Արթուր Իսպիրյան

-Անդրադառնամ երկրորդ հարցին. խորհրդային տարիներին յուրաքանչյուր շրջան ուներ մշակութային կենտրոն, կինոթատրոն, այգիներ, մարզասրահներ, որոնք տարիների ընթացքում սեփականաշնորհվել են: Այդ պատճառով ներկայումս քաղաքի կենտրոնում առաջանում են կուտակումներ: Օրինակ՝ 3-րդ մասում հայտնի կինոթատրոնը և հանրախանութը չի գործում: Այսինքն, վարչական շրջաններում հանգստի և ժամանցի կենտրոնները չգործելու պատճառով մարդիկ այցելում են քաղաքի կենտրոնական հատվածում գործող մշակութային և ժամանցային հաստատություններ:

Արդյոք զարգացման ծրագրերում նախատեսվում է վարչական շրջաններում ունենալ նմանատիպ հաստատություններ, որպեսզի քաղաքի կենտրոնը շատ չճանրաբեռնվի:

Հրաչյա Սարգսյան

-Երևան քաղաքի զարգացման հնգամյա և տարեկան ծրագրերում, եթե չեմ սխալվում, այդպիսի գաղափար չկա: Կարծում եմ, այս հարցը պետք է դիտարկել նաև տրանսպորտի և քաղաքաշինության տեսանկյունից: Այդ ամենը կարծում եմ, կարելի է ինչ-որ կերպ ամրագրել: Ներկայումս տարբեր վարչական շրջաններում կան անմխիթար վիճակում գտնվող սպորտային ակումբներ: Հարցումների արդյունքում պարզվել է, որ նշված պատճառով տվյալ վարչական շրջանում գործող սպորտային ակումբից երեխային տեղափոխում են այլ վարչական շրջանում գործող սպորտային ակումբ: Ուստի՝ պետք է այդ հաստատություններում իրականացնել կապիտալ վերանորոգման աշխատանքներ:

Այդ ուղղությամբ հստակ մշակված ռազմավարություն չունենք:

Արթուր Իսպիրյան

-Խոսքը նաև վերաբերում է վարչական շրջաններում գործող շուկաներին: Օրինակ՝ շաբաթ օրն այցելել եմ Սասունցի Դավթի արձանին հարակից կայարանամերձ տարածք: Նշված տարածքում 09.30-ից կազմակերպվում է գյուղատնտեսական արտադրանքի անկանոն շուկա: Կարծում եմ համայնքը կարող է կոորդինատորների միջոցով կարգավորել այդ իրավիճակը: Նշված հատվածում մեծածախ առևտրի կազմակերպումը խոչընդոտում է նաև տրանսպորտի շարժին: Մայթեզրերն աղտոտված են և առկա են մրգերի մնացորդներ:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության պետ Հովիկ Սաֆարյանը:

Հովիկ Սաֆարյան

-Նախկինում ևս ստացել ենք ահազագեր, որ Սասունցի Դավթի արձանին հարակից կայարանամերձ գյուղատնտեսական արտադրանքի շուկայում առևտրականներն իրենց գործունեությունը ծավալում են ոչ սահմանված վայրերում: Ահազանգից հետո Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը նշված տարածքում կազմակերպել է հերթապահություն և հարցը կարգավորվել է: Այս խնդիրը պարբերաբար դուրս է գալիս վերահսկողությունից: Նոր ահազագեր և հաղորդումներ ստանալու դեպքում դարձյալ կսահմանվի հսկողություն: Այս գործընթացը մշտական հսկողության կարիք ունի: Կրկին անգամ կսահմանվի հսկողություն և հարցը կկարգավորվի:

Հրաչյա Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության անդամ Էռնեստ Ավանեսով, խնդրեմ:

Էռնեստ Ավանեսով

-ՀՀ կառավարության 01.09.2005թ. N1428-Ն և 16.07.2015թ. N789-Ն որոշումներով կարգավորվում են մարզադպրոցների ուսումնամարզական գործընթացին առնչվող չափորոշիչները: Նշված որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով Երևանի քաղաքապետին ուղղել եմ երկու գրություն: Առաջարկել եմ վերոնշյալ որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի կողմից հավաքագրել համայնքապատկան մարզադպրոցների տնօրենների և մարզիչների առաջարկները: Կարծիքները և դիտարկումներն ստանալուց հետո դրանք կուղարկվեն լիազոր մարմին՝ նախարարություն, խնդրանք-առաջարկով, որպեսզի համապատասխան փոփոխությունները կատարվեն:

Ձերծ մնալով որակումներ հնչեցնելուց, պետք է նշեմ, որ գրությունների վերաբերյալ ներկայացված պատասխանները բավարար չեն: Այդ պատճառով ներկայացրել եմ երկրորդ գրությունը: Որպես հիմնավորում ներկայացվել է, որ նման առաջարկների համար անհրաժեշտ է կատարել գիտական հետազոտություններ: Սպորտի բնագավառում անձամբ զբաղվում եմ գիտական հետազոտություններով և ինձ համար անհասկանալի է, թե ի՞նչ հետազոտությունների մասին է խոսքը: Խնդրում եմ մանրամասնել:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ Արա Բաղդամյանը:

Արա Բաղդամյան

-Ձեր կողմից ներկայացված առաջարկությունը տեղին է: Անհրաժեշտ է կատարել ուսումնասիրություններ: Մարզադպրոցների ուսումնամարզական գործընթացին առնչվող չափորոշիչները պետք է փոփոխվեն, քանի որ դրանք ընդունվել են դեռևս 1986 թվականին: 1993 թվականին նույն չափորոշիչները վերահաստատվել են: Չափորոշիչներն ընդունվել են գիտահետազոտական մարմնի կողմից, քանի որ դրանք վերաբերում են մանկահասակ երեխաներին: Այդ չափորոշիչները սահմանում են, թե որ տարիքից երեխան պետք է զբաղվի տվյալ սպորտաձևով: Քանի որ դա կապված է երեխայի օրգանիզմի աճի հետ, ուստի՝ հարցը հանդիսանում է գիտական խնդիր: Չափորոշիչները սահմանում են նաև մեկ խմբում երեխաների թվաքանակը: Նշված հարցերը տևական ժամանակ քննարկվել են մարզադպրոցների տնօրենների և մարզիչների հետ: Հավաստիացնում եմ Ձեզ, որ եղել են բազմաթիվ տարբեր կարծիքներ, ուստի՝ պետք չէ հիմնվել այդ կարծիքների վրա: Բացի այդ, մենք իրավունք չունենք կարծիք հայտնել: Պնդում եմ, որ սա գիտական հետազոտության

խնդիր է: Հաշվի առնելով, որ չափորոշիչները ներկայացնում է լիազոր մարմինը, առաջարկում եմ, Դուք՝ որպես շահագրգիռ անձ և քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժինը՝ որպես շահագրգիռ մարմին, համատեղ աշխատեն լիազոր մարմնի հետ: Անձամբ տարիներ շարունակ քննարկել եմ հարցը տվյալ նախարարության համապատասխան մասնագետների հետ: Այս պահի դրությամբ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը՝ լիազոր մարմինը, զբաղվում է այդ չափորոշիչների խնդրով: ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը համատեղ աշխատում է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մասնագետների հետ, ովքեր նաև իրականացնում են գիտահետազոտական աշխատանք: Այդ աշխատանքը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի գործառույթներից դուրս է:

Էռնեստ Ավանեսով

-Երկար տարիներ աշխատել եմ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում: Եղել եմ կառավարման խորհրդի անդամ, ներկայումս մասնագիտական խորհրդի անդամ եմ: Տեղյակ եմ, թե ինչ աշխատանք է կատարում Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը: Կրկին պնդում եմ, որ համակարծիք չեմ այն դիրքորոշման հետ, որ կա գիտական հետազոտության անհրաժեշտություն: Համաձայն չեմ, որ հաշվի չի առնվում մարզադպրոցների ներկայացուցիչների կարծիքները: Պարտավոր եք լսել բոլորի կարծիքները և պետք է խրախուսել տարակարծությունը: Նման գործընթացում պետք է բացառել միանձնյա որոշումը: Նշեմ, որ քննարկում է կայացել մարզադպրոցների տնօրենների հետ և ներկայացվել են բազմաթիվ առաջարկություններ: Ներկայումս գործող չափորոշիչները հին են:

Խնդրում եմ Երևանի ավագանու անդամների և քաղաքացիների կողմից ներկայացված գրություններին տալ հստակ պատասխաններ:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կանդիդատնա Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

Տիգրան Վիրաբյան

-Պարոն Ավանեսով, Դուք նշեցիք, որ մարզադպրոցների տնօրենները քննարկումներին չեն հրավիրվել: Անձամբ կազմակերպել եմ 2 հանդիպում բոլոր սպորտդպրոցների տնօրենների հետ: Երկու ժամ տևողությամբ հանդիպման ընթացքում տնօրենների կողմից ոչ մի անհանգստություն չի հնչել: Ես, ՀՀ ԿԳՄՍ նախկին փոխնախարար Գևորգ Լոռեցյանը և քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լևոն Ջուլֆալակյանը կատարել ենք շրջայց Երևան քաղաքի բոլոր

մարզադպրոցներ և որևէ տնօրեն այս հարցը չի բարձրացրել: Տվյալ հարցի վերաբերյալ մարզադպրոցների տնօրենների կարծիքները հաշվի չառնելու Ձեր դիտարկման վերաբերյալ նշեմ, որ կամ Ձեզ հարցը ճիշտ չի ներկայացվել, կամ առկա է թյուրըմբռնում: Մեր կողմից առաջարկություններ ներկայացնելու մասով կա ինչ-որ չափով կաշկանդվածություն, քանի որ ներկայացված առաջարկությունների հիման վրա տվյալ գերատեսչության կողմից իրականացված փոփոխությունները վերաբերում են ամբողջ հանրապետությանը: Արդյունքում, չգիտենք փոփոխված չափորոշիչները հանրապետության մյուս քաղաքներում հարմար կլինի գործածել, թե ոչ: Հարցի կարգավորման համար գործում է վերադաս մարմին, որը մշակում է քաղաքականությունը: Ձեր առաջարկությունների փաթեթը կարող էք ներկայացնել համապատասխան գերատեսչություն: Տվյալ գերատեսչության կողմից փոփոխություն իրականացնելուց հետո, ինչպես հանրապետության մյուս քաղաքները, Երևան քաղաքը ևս կառաջնորդվի նոր չափորոշիչներով:

Էռնեստ Ավանեսով

-Պարոն Վիրաբյան, չնայած նշեցիք, որ Ձեր շրջայցերի ընթացքում նման հարց չի հնչել տնօրենների կողմից, սակայն իմ կողմից բարձրացված հարցն առկա է:

Տիգրան Վիրաբյան

-Պարոն Ավանեսով, եթե տնօրենի մոտ առկա է լինում հրատապ հարց, աշխատանքային քննարկման ժամանակ այդ հարցը բարձրացվում է: Ձեր կողմից ներկայացված հարցը երբևէ չի բարձրացվել տնօրենների կողմից:

Հրաչյա Սարգսյան

-Երևանի քաղաքապետարանը հիմնականում հանդիսանում է իրավական ակտերի կիրառող, որն հնարավորություն է տալիս առաջինը նկատել թերությունները: Առաջարկում եմ ՀՀ կառավարության որոշմամբ ընդունված չափորոշիչները փոփոխելու համար կազմակերպել քննարկում:

Պարոն Բաղդամյան, խնդրում եմ մարզադպրոցների մարզիչների կողմից ներկայացված առաջարկներն ուսումնասիրել:

Արա Բաղդամյան

-Տարիների ընթացքում Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող 41 կազմակերպության կողմից ներկայացվել են առաջարկություններ:

Հրաչյա Սարգսյան

-Խնդրում եմ կրկին հավաքագրել առաջարկությունները և Երևանի ավագանու անդամ Էռնեստ Ավանեսովի հետ կազմակերպել քննարկում:

Էռնեստ Ավանեսով

-Երկրորդ հարցը վերաբերում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգման մրցույթների գործընթացին: Տեղյակ եմ, որ մրցույթները դարձյալ չեն կայացել:

Խնդրում եմ պարզաբանել աշխատանքների կատարման գնային քաղաքականության մեջ կա արդյոք ընդհանրական մոտեցում, ինչպե՞ս է վերահսկվում գնագոյացումը և ինչու՞ չեն կայանում մրցույթները:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Դավիթ Թումանյանը:

Դավիթ Թումանյան

-Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգման համար պետք է հայտարարվի նոր մրցույթ:

Հրաչյա Սարգսյան

-Պարոն Ավանեսով, տեղեկացնում եմ, որ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ժամանակ ներառվում են նաև աշխատանքի ծավալները: Յուրաքանչյուր աշխատանքի մեկ միավորի սակագինը սահմանված է ըստ 1992 թվականին հաստատված արժեքի, որին համապատասխան ծավալաթերթը լրացվում է: Շատ դեպքերում ծավալաթերթը չի համապատասխանում իրականությանը, որի պատասխանատուն, որպես լիազոր մարմին՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն է: Ենթադրում եմ, որ հաճախ փոքր ծավալով աշխատանքների դեպքում փոքր գումարների պատճառով մասնակիցներ չեն լինում:

Էռնեստ Ավանեսով

-Նույն աշխատանքի համար այլ վարչական շրջանում ավելի բարձր գին է սահմանվել: Ցանկանում եմ պարզաբանեք այդ գումարային տարբերության պատճառը:

Հրաչյա Սարգսյան

-Պարոն Ավանեսով, հնարավոր է ծավալաթերթում լինի անվանման ձևակերպման հարց: Այսինքն՝ անվանումը լինի «Շքամուտքի վերանորոգում» և անհրաժեշտություն լինի 1-ին հարկն ամբողջությամբ վերանորոգել: Այլ վարչական շրջանում նմանատիպ շենքում 1-ին հարկի վերանորոգման աշխատանքների անհրաժեշտություն չլինի: Այդ պատճառով նախագծերը պետք է համեմատել՝ ըստ ծավալների:

Հրաչյա Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գրիգորի Երիցյան, խնդրեմ:

Գրիգորի Երիցյան

-Երևանի քաղաքապետարանում նախատեսվում է հետևյալ կադրային փոփոխությունները.

Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի և քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի պաշտոնները թափուր են և պետք է կատարվեն նշանակումներ:

Խնդրում եմ ներկայացնել ի՞նչ փուլում է գտնվում գործընթացը և արդյոք կան տվյալ պաշտոնների համար թեկնածուներ:

Հրաչյա Սարգսյան

-Այս պահի դրությամբ Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի պաշտոնի համար թեկնածու չկա:

Հարցի երկրորդ մասի վերաբերյալ պարզաբանում կներկայացնի Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

Տիգրան Վիրաբյան

-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի պաշտոնի համար կա թեկնածու: Քանի դեռ մրցույթ չի հայտարարվել, կնշանակվի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար: Ընթանում են քննարկումներ և վերջնական համաձայնության դեպքում կլինի հայտարարություն: Մի շարք հարցերի շուրջ կա համաձայնության գալու անհրաժեշտություն:

Պետք է հաշվի առնել, որ այս ոլորտում աշխատանքային ծավալը բավականին մեծ է և աշխատավարձը ցածր է: Այս ոլորտում ունենալ լավ մասնագետ՝ նման ծավալով աշխատանքի և համեմատական ցածր աշխատավարձի դեպքում, բարդ գործընթաց է: Կարծում եմ 15-օրյա ժամկետում կլինի վերջնական պատասխան:

Գրիգորի Երիցյան

-Հաշվի առնելով, որ մենք այս ոլորտը տիրապետում ենք, առաջարկում եմ տվյալ թեկնածուի նշանակման վերաբերյալ քննարկումներ կազմակերպել նաև Երևանի ավագանու անդամներ հետ:

Երկրորդ հարցը. նախկինում այս հարցը քննարկվել է: Հարցը վերաբերվում է այն անձին, ով ծեծել էր ցուցարարներին: Նա աշխատանքի էր ընդունվել Երևանի քաղաքապետարանում: Հետագայում տվյալ անձն ազատվել է աշխատանքից: Տեղեկություն ունեմ, որ տվյալ անձն ամեն օր գտնվում է վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքում: Աշխատակիցների այն հարցին, թե ինչու՞ է նա գտնվում վարչական

շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքում, պատճառաբանվել է, որ այցերը պայմանավորված են ընկերների հետ հանդիպման նպատակով:

Հարցս հետևյալն է՝ արդյոք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքը հանդիսանում է ընկերների հետ հանդիպման վայր, եթե ոչ, ապա տվյալ անձնավորությունն ինչու² է ամենօրյա ռեժիմով գտնվում վարչական շենքում:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար Թելման Թադևոսյանը:

Թելման Թադևոսյան

-Ընկերների հետ հանդիպման նպատակով շենք այցելելու վերաբերյալ իմ կողմից պատասխան չի տրվել: Տվյալ անձնավորությունն աշխատում է մասնավոր ընկերությունում: Նա պարբերաբար այցելում է վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ, քանի որ տվյալ ընկերությունը վարչական շրջանում կատարում է շինարարական աշխատանքներ: Ես չգիտեմ բնակչին կամ տվյալ ընկերության աշխատակցին վարչական շենք մուտք գործելն արգելելու իրավասություն ունենք, թե ոչ: Նման լիազորություն ունենալու դեպքում, կիրականացնեմ այդ լիազորությունը:

Գրիգորի Երիցյան

-Խնդրում եմ պատասխանել՝ նա մասնակցում է վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում քաղաքացիների ընդունելությանը:

Թելման Թադևոսյան

-Ոչ: Նա նման իրավասություն չունի:

Հրաչյա Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Աննա Ջավախյան, խնդրեմ:

Աննա Ջավախյան

-Երևանի քաղաքապետարանը երեկ հայտարարություն է տարածել, որ ս.թ. սեպտեմբերի 15-ից կվերաբացվեն մանկապարտեզները, որոնք կգործեն որոշակի սահմանափակումներով: Սահմանափակումների հետևանքով ընդունելություն չի կազմակերպվում և հարյուրավոր ծնողներ դիմել են ինձ: Հիմնականում դիմում են աշխատող ծնողները, ովքեր նշում են, որ ցածր աշխատավարձ են ստանում և հնարավորություն չունեն կազմակերպել երեխաների ցերեկային խնամքը: Այս ուղղությամբ ունեմ որոշակի տեսլական, որն այս պահի դրությամբ մշակում եմ գործընկերներիս հետ: Հետագայում առաջարկները գրավոր կներկայացնեմ:

Ի՞նչ է նախատեսվում մինչև ընդունելությունների կազմակերպումը, 3 տարեկանը լրացած երեխաների ցերեկային խնամքն ապահովելու համար:

Հրաչյա Մարգարյան

-Հարցին կապատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

Տիգրան Վիրաբյան

-Բարձրացված հարցը կարևոր է: Խնդիր կա նաև գերբեռնված խմբերի հետ կապված: Այս դեպքում ևս ունեինք ընդունելության խնդիր, քանի որ հազարավոր երեխաներ դուրս են մնում հերթից:

Նոր սահմանափակումները խնդիրներ են առաջացրել: Մեր կողմից առաջնայնություն և արտոնություն է սահմանվել մի շարք խմբերի համար, որոնց համար հույժ կարևոր է երեխայի մանկապարտեզ հաճախելը: Մեր կանխատեսումների ճշգրտությունը պարզ կլինի առաջիկա մեկ շաբաթից հետո: Նախորդ անգամ զանգերի միջոցով կատարված ճշտումներից միջոցով պարզվել էր, որ մանկապարտեզներում պետք է լինեին երեխաների 30% հաճախելիություն: Կատարվեց ռիսկերի գնահատում, բայց արդյունքում արձանագրվեց երեխաների 6-7% հաճախելիություն: Այդ պատճառով այժմ սահմանվել է այս առաջնահերթությունները:

Սկզբնական շրջանում՝ 10-15 օրվա ընթացքում, նախատեսված 28-29% ծանրաբեռնվածությամբ, այսինքն մանկապարտեզ հաճախող 11000 երեխա-թվաքանակն ամբողջությամբ էթե չլրանա և մանկապարտեզներ հաճախեն 6000-7000 երեխա, Ձեր նշած հարցին կանդրադառնանք: Մնացած 4000 թվաքանակի մասով կմշակվի ընդունելության կարգ: Սա վերաբերվում է աշխատող ծնողների երեխաներին:

Կարծում եմ, այս անցումային փուլում հնարավոր կլինի առաջիկա 10 օրվա ընթացքում ունենալ որոշակի արդյունքներ: Երեխաների մանկապարտեզ հաճախելը պայմանավորված է նաև համավարակի դեպքերի թվաքանակով: Դիմել էինք պարետատուն, որ յուրաքանչյուր խմբում 12 երեխայի փոխարեն առավելագույնը լինեն 17 երեխա, որը մերժվել է:

Ընդունելության կարգը կքննարկվի այն ժամանակ, երբ պարզ կլինի արդեն իսկ մանկապարտեզ հաճախող երեխաներին այս ձևաչափով հնարավոր է սպասարկել, թե ոչ:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի 1-րդ նիստը հայտարարում եմ փակված:
Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կազմեցին՝ Լ. Ալոյան, Ն. Ղուկասյան